



ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ա/ Հարկային ոլորտի բարելավման միջոցառումների մասով ցանկանում ենք նշել, որ «հարկերի վճարում» ցուցիչը հարկային քաղաքականության և հարկային վարչարարության ամբողջականությունն է և նախատեսվող միջոցառումների ցանկում առաջարկում ենք ներառել նաև հարկային բազայի ընդլայնման և միաժամանակ հարկերի դրույքաչափերի վերանայման հետ կապված միջոցառումները, քանի որ նոր հարկային օրենսգրքով եկամտային հարկի դրույքաչափերի փոփոխությունը/բարձրացումը արդեն իսկ բացասաբար է ազդելու այդ ցուցիչի վրա: Այս առումով առաջարկում ենք նաև եկամտային հարկի նվազեցումների համակարգի ներդրման հետ կապված միջոցառումների ներդրումը:
բ/ Գույքահարկի հավաքագրման արդյունավետ համակարգի ներդրմանն ուղղված միջոցառումների ձեռնարկումը՝ հաշվի առնելով գույքահարկի վճարումից խուսափելու համար միասնական գույքը մասնատելու դեպքերը, ինչպես նաև գույքի արժեքի որոշման կարգը, ինչը հատկապես նվազեցնում է թանկարժեք անշարժ գույքի հարկերը մի քանի անգամ:
գ/ Ի լրումն վերոգրյալի՝ առաջարկում ենք նաև՝ Հայաստանում ներդրումներ կատարելու դեպքում համաշխարհային հայտնի ընկերություններին (հիմք ընդունելով տվյալ տարվա սկզբի դրությամբ Fortune 500-ի ցանկում ընգրկված լինելու հանգամանքը) ազատել շահութահարկից 5 տարի ժամկետով:
2. Այսօր Հայաստանի Հանրապետության տնտեսության համար գերնպատակ է հանդիսանում արտահանման խթանումը հատկապես գյուղատնտեսության ոլորտում: Մինևույն ժամանակ ազրոբիզնեսի համար լրացուցիչ ծախսեր են պահանջվում սննդամթերքի արտադրությունը եվրոպական և այլ ստանդարտներին, մասնավորապես «Վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգ» (HACCP)-ի համապատասխանեցման համար: Այս համակարգի

սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերի մշակման, իրականացման և պահպանման պահանջը բխում է նաև «Մենդամթերքի անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգից, ուստի «Վարկերի ստացում» ցուցիչում առաջարկում ենք ավելացնել միջոցառումներ, որոնք կվերաբերեն այս ուղղությամբ արտոնյալ նպատակային վարկերի տրամադրմանը:

3. ա/ «Արտաքին առևտուր» ցուցիչում մաքսային կարգավորման և ընթացակարգերի վերաբերյալ անհրաժեշտ ենք համարում նշել, որ շուտով ուժի մեջ մտնող ԵԱՏՄ Մաքսային օրենսգիրքը արտահանման և ներմուծման նոր կանոններ և ընթացակարգեր է նախատեսում, որի պարագայում առաջարկում ենք մեկ միասնական պատուհանի սկզբունքի ներդրումը գործընթացների դյուրինացման նպատակով:

բ/ Բացի այդ, հաշվի առնելով նոր Մաքսային օրենսգրքի հսկայական ծավալը, առաջարկում ենք սպասարկման գրասենյակների ընդլայնում կամ սպասարկման գործառույթների պատվիրակում այլ կազմակերպությունների:

գ/ Առաջարկում ենք հստակեցնել և պարզեցնել երկակի նշանակություն ունեցող ապրանքների մաքսագերծման գործընթացները, այդ թվում՝ երկակի նշանակության ապրանքների համար եզրակացություն տրամադրելու համար օրերի քանակը կրճատել, սահմանելով այն 3-5 աշխատանքային օր, իսկ դրա համար նախատեսվող գանձումները դարձնել 50 ԱՄՆ դոլար, ինչպես նաև հրապարակել երկակի նշանակություն ունեցող ապրանքների ցուցակը,

դ/ Ներմուծողների համար ստեղծել համապատասխան պայմաններ բեռնափոխադրող ավտոմեքենաների՝ տարբեր կցորդներով մուտք և ելք իրականացնելու համար:

ե/ Նույն մատակարարի կողմից նույն ապրանքատեսակներ ներմուծելու դեպքում պահանջել որակի սերտիֆիկատը գոնե տարին մեկ անգամ, այլ ոչ թե յուրաքանչյուր ներմուծման ընթացքում:

4. Կարծում ենք, որ բիզնեսի հիմնադրման հետ կապված հարցերում Հայաստանի Հանրապետությունը կտրուկ բարելավել է իր ցուցանիշները, այնուամենայնիվ առաջարկում ենք հարկ վճարողի՝ հարկային օրենսդրության պահպանմանն ուղղված առաջնային նվազագույն պահանջների իրագրելիությունը բարձրացնելու նպատակով ընկերություն գրանցելիս կամ անհատ ձեռնարկատեր հաշվառվելիս տեղեկատվական թերթիկի միջոցով իրագրել և հայտարարության ձևաչափով ներկայացվող փաստաթղթով տնտեսավարողի ստորագրությամբ հավաստում ստանալ այդ պահանջների մասին վերջիններիս տեղեկացվածության մասին: